զձեռսն և զկաշխսն և զխուղսն ի դուրս հանեալ և զոս-
կերքն կտոր կտոր արարեալ, միայն ջիլքն և գլուխքն
երևխր, որպէս զգէշ անկեալ առաջի գազանաց սար-
սափելի տեսողաց: Եւ զի՞նչ ասացից ես Մուլքի խա-
թունին որ յազգս իւր փոքր թագաւոր վերաձայնէր,
որ էանց բազում բանիւք, որ ԿԹ ղուռուշի օրորոց
արարեալ որդոյն՝ ոսկով եւ մարգարտով եւ ակամբ
պատուականօք: Եւ այժմ զի՞նչ եղև. այլք վայելեցին
զայնչափ բարիսն, զի մեռաւ ինքն, այլ և փառքն և
մեծութիւնն ընդ իւր, և այն՝ ոչ օրինաւոր մահուամբ,
գտեալ ի փախստեայ տեղոջն, քանզի ծակէ ի ծակ
մտեալ, խեղդեալ ձեռօք դահճին, խայտառակօրէն և
անարգ մահուամբ ի ծառէն ի վայր կախեալ: Եւ որ
սայլիւ մօտ ի թագաւորն երթայր պահապանօք և յաջ-
մէ և յահեկէ ծառայք և աղախնայք, և ոչ ոք լինէր
ի մեծամեծաց տառապելոց արանց կանայս որ խըն-
դրելոյ բան արժանանային, այսօր յընթացս ապա-
րիսին ի վերայ ծառին հային արժան և անարժան[1]),
եկաւորք և անցաւորք, և բազմամբոխ հայհոյելով և
թքելով առ յերես նորա: Եւ որ յաթոռս զեղեցկաշէն
և վայելուչ հանգչելով հրամայէր և ծառայքն ընդդէմ
կանգնեալ դողային, այսօր ի վերայ ձիոյն են բար-
ձեալ որպէս զաղբ անպիտան և որպէս զգէշս տարան
ի կախել: Եւ որ հանդերձն և զգեստն էր ծիրանի թա-
գաւորական և կամարակապ գօտիք ականակուռ և ա-
ռաջի թագաւորին քայլէր երթևեկութեամբ և թագա-
ւորն նորա Մօրաքոյր ձայնելով զնա պատուէր առաջի
ամենայն մեծամեծացն, այսօր ի վերայ ծառին կա-
խեալ բացազլուխ և անարգ, և արկեալ են ի վերայ
կտոր մի չըլի: Եւ յոր ժամու կանգնեալ լինէր և գայր
ի թագաւորէն, ծառայքն վազվազելով դողային՝ թէ

1) անարժ.